ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ*

Սամվել Պողոսյան

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից իրականացված հայոց ցեղասպանությանը զոհ դարձավ նաև գրեթե 400.000 հաշվվող կիլիկիահայությունը: Տարագրությունն ու կոտորածը Կիլիկիայում սկսվեց ավելի վաղ, քան Արևմտյան Հայաստանում և մյուս վայրերում: Դա պայմանավորված էր նրանով, որ թուրքական իշխանությունները վախենում էին անգլո-ֆրանսիական զորքերի ափհանման հնարավորությունից կիլիկյան ծովեզերքում:

Պատերազմի սկսվելուց հետո 21-45 տարեկան տղամարդիկ զորակոչվեցին օսմանյան բանակ [1]: Կիլիկիայից տասնյակ հազարավոր հայ երիտասարդներ մեկնեցին բանակ, որի հետևանքով երկրամասը զրկվեց մարտնչելու, թուրքերին դիմագրավելու ընդունակ ուժերի զգալի մասից:

Թուրքերին ամենից շատ անհանգստացնում էր հերոսական անցյալով հայտնի Զեյթունը: Առաջնահերթ ձևով զինաթափվեցին ու տարագրվեցին զեյթունցիները: Դեռևս 1914 թ. սեպտեմբերի 6-ին ձերբակալվեցին Զեյթունի քաղաքապետ, 1895-1896 թթ. փայլուն ապստամբության առաջնորդ Նազարեթ Չաուշը և այլ նշանավոր գործիչներ [2]: Նրանց մեծ մասը տանջամահ արվեց բանտում: Նրանք դարձան Մեծ եղեռնի առաջին նահատակները: Առանց ղեկավարության մնալով՝ մինչև 1915 թ. մայիս գրեթե բոլոր զեյթունցիները տարագրվեցին՝ մոտ 6.000-ը՝ Կոնիայի տարբեր շրջաններ, մյուսները՝ Դեր Զոր [3]: Զեյթունցիների միայն մի փոքր խումբ բարձրացավ լեռները, և պարտիզանական պայքար մղեց մինչև պատերազմի ավարտը:

Զեյթունցի էդուարդ Ոսկերիչյանը 1918 թ. ապրիլին Ապահին (Պետրոսյան) ուղարկած նամակում հետևյալ պատճառներով է մեկնաբանում անհավատալի թվացող այն փաստը, որ զեյթունցիները չկռվեցին: Նա առանձնացնում է այն, որ դեռևս 1913 թ. հնչակյանները փորձել էին Եգիպտոսում գումարներ հայթայթել, զենք ու զինամթերք գնել Զեյթունի համար, սակայն բոլորը մերժել էին: Հետևաբար, առանց անհրաժեշտ զենքերի, հերոս լեռնականները ստիպված էին եղել բռնելու գաղթի ճանապարհը [4]: Սակայն զինամթերքի պակասից ավելի կարևոր էր այն, որ թուրքերը կարողացան ձերբակալել ղեկավար գործիչներին, որով լեռնականներին զրկեցին կազմակերպող, համախմբող առաջնորդներից:

1915 թ. փետրվարի 7-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Փարիզի ռուսական դեսպանությանն ուղարկած գաղտնի հեռագրով տեղեկացնում էր, որ Կովկասյան բանակի շտաբ են ներկայացել զեյթունցի պատվիրակներ և ինքնապաշտպանության համար զենք են խնդրել, քանի որ Կիլիկիայում կոտորածների սպառնալիքը մեծացել էր: Փոխարքան կարևորում էր հարցի ռազմավարական նշանակությունը դաշնակիցների համար և անհրաժեշտ էր համարում անհապաղ պահանջված քանակությամբ հրացաններ և փամփուշտներ հասցնել Ալեքսանդրետի ծովածոցում սպասող հայերին: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Զեյթունի հայերի գործողություններն օգտակար կլինեին ֆրանսիացիներին, ելնելով նաև խնդրի անհետաձգելիությունից և այն փաստից, որ ռուսները հնարավորություն չունեն անմիջապես հայերին տրամադրել պահանջվող

---

* Հոդվածն ընդունվել է 08.04. 2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

հրացանները, նա անհրաժեշտ էր համարում կապվել ֆրանսիական կառավարության հետ և նշել, որ Ռուսաստանի համար ցանկալի է, որ ֆրանսիական ռազմանավերով Ա-լեքսանդրետ հասցվի զենք ու զինամթերք [5]:

Այդ դիմումը Փարիզում ռուսական դեսպան Ալեքսանդր Իզվոլսկին անմիջապես փոխանցեց Ֆրանսիայի ԱԳՆ [6]: Սակայն փետրվարի 14-ին Ա. Իզվոլսկին փոխարքային տեղեկացրեց, որ Ֆրանսիայի արտգործնախարար Թեոֆիլ Դելկասեն մերժել է՝ նշելով որ «ֆրանսիական կառավարությունը բացարձակապես զուրկ է Զեյթունի հայերին որևէ քանակությամբ հրացաններ տրամադրելու հնարավորությունից, քանի որ Ֆրանսիան՝ ինքը դրանց խիստ կարիքն ունի» [7]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հնչակյաններին չհաջողվեց անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք կենտրոնացնել Զեյթունում նախապատերազմյան շրջանում, թուրքերին հաջողվեց զեյթունցի առաջնորդներին վնասազերծել մինչև պատերազմի մեջ մտնելը, ինչպես նաև, չնայած ռուսական կողմի դիմումին, Ֆրանսիան զլացավ որևէ օգնություն տրամադրելուց զեյթունցիներին՝ ինքնապաշտպանության համար: Այս ամենը հանգեցրեց նրան, որ դարերով հաջող ինքնապաշտպանություններ կազմակերպած, մարտական բարձր որակներ ունեցող զեյթունցիներն առաջին անգամ անպատրաստ գտնվեցին դիմագրավելու ոտխին, այն էլ՝ հայության համար ամենավճռորոշ պահին: Զեյթունի ապստամբությունը կարող էր ոգևորող ազդեցություն ունենալ հայության բազմաթիվ հատվածների վրա, որի շնորհիվ եղեռնից փրկվողների թիվը ավելի մեծ կլիներ:

Զեյթունի ապստամբության վտանգը չեզոքացնելուց հետո թուրքական իշխանությունները նախապատրաստեցին ու իրականացրին կիլիկիահայության տարագրությունը:

Ապրիլ-մայիս ամիսներին Կիլիկիայի բոլոր բնակավայրերում, դպրոցներում, վանքերում, Սսի կաթողիկոսարանում թուրքական ոստիկանությունը սկսեց հաճախակի խուզարկություններ իրականացնել, որոնց արդյունքում զենք և զինամթերք գրեթե չհայտնաբերվեց: Չնայած դրան՝ տարբեր պատրվակներով, ձերբակալվեցին և կախաղան բարձրացվեցին բազմաթիվ անմեղ հայեր: Հետզհետե մեծ ծավալներ ընդունեց տեղահանությունը: Հայ բնակչությանը բռնագաղթեցնում էին Սիրիայի ու Միջագետքի անապատներ, իսկ նրանց տները հանձնում էին մահմեդական վերաբնակիչների [8]:

Հալեպի գերմանական հյուպատոս Կ. Ռոսլերի հեռագրի համաձայն՝ արդեն հունիսի սկզբին Կիլիկիայից դեպի Սիրիա էր տարագրվել 30.000 հայ, որոնց փոքր խմբերով ցրել էին մահմեդական գյուղերի մեջ: Ըստ հյուպատոսի՝ դրա նպատակը հայերի ոչնչացումն էր [9]: Մայիսի 5 - հուլիսի 6-ը տարագրվեց Դյորթ Յոլի 22.000 հայությունը [10]: Հունիսի 25-ին սկսվեց Սսի հայության տեղահանությունը [11]:

Բացի Զեյթունից՝ Կիլիկիայի մյուս բնակավայրերում հայ նշանավոր գործիչներին, մտավորականներին տարագրությունից առաջ չսպանեցին՝ ի տարբերություն կայսրության մյուս նահանգների: Ադանայի նահանգի ժանդարմերիայի հրամանատար և ռազմական ատյանի նախագահ Ավնի բեյը թեև առաջարկեց մյուս վայրերի նման աչքի ընկնող գործիչներին ոչնչացնել, ապա նոր գաղթեցնել բնակչությանը, սակայն Ադանայի ոստիկանապետ չերքեզ Զեմալ բեյը, որը մասոն էր, կտրականապես դեմ արտահայտվեց անմեղ մարդկանց սպանելուն և կարողացավ համոզել նահանգապետ Իսմայիլ Հագգը բեյին, որ բավարարվեն աքսորով: Օգոստոսին Ադանայի նահանգի դեռևս չտարագրված բոլոր հայերը, բացի զինվորների ընտանիքներից, հրահանգ ստացան սեփական միջոցներով հեռանալ դեպի Հալեպ [12]: Սեպտեմբերի սկզբին Ադանայի վիլայեթում այլևս հայեր գրեթե չկային [13]: Սահակ Բ կաթողիկոսին նույնպես հրամայվեց հեռանալ Կիլիկիա-

յից: Հոկտեմբերի 21-ին նա հեռացավ Սսից և հոկտեմբերի 31-ին հասավ Երուսաղեմ [14]:

Հուլիսի 5-ին Հալեպից Պոլսի պատրիարք Զավեն Եղիայանին ուղարկած նամակում Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսը նկարագրում էր այնտեղ գտնվող գաղթականների ծայրահեղ ծանր վիճակը: Ներկայացնում էր տեղի հայերի, հույների ու ասորիների աջակցությունը, միաժամանակ հիացմունք էր հայտնում գաղթականների փոխօգնության պատրաստակամության մասին. «Ամէնէն սրտառուչն է, երբ նոր գաղթականներ կը ժամանեն, հիները կը մոռնան իրենց բոլոր ցաւերը եւ տառապանքը, թէեւ իրարու անծանօթ, իբրեւ հին ծանօթներ՝ կը վազեն, կը դիմաւորեն, կը գրկախառնուին, արտասուքնին իրարու կը խառնեն, կ'օգնեն, կ'առաջնորդեն եւ ահա Եկեղեցւոյ բակը կը լեցուի մարդով, անասունով, բեռներով: Եղբայրաբար կը քակեն, բեռները վար կ'առնեն, կը շալկեն, կը տեղափոխեն եւ կը տեղաւորեն. թուրքերն ալ կը զարմանան եւ կը նախանձին, թերեւս Կառավարութիւնը աւելի գէշ աչքով կը դիտէ» [15]: Այդ ամենին ականատես լինելով՝ Կիլիկիայի կաթողիկոսը հանգել էր հետևյալ եզրահանգմանը. «Սուտ են ընկերվարականաց վարդապետութիւնք. միայն թշուառութիւնը, միայն հալածանքը դիրք, աստիճան, խելք եւ յիմարութիւն մէկ խմոր եւ մէկ զանգուած կընէ» [16]:

1915 թ. մայիսի սկզբին եգիպտահայ գործիչներն սկսեցին տեղեկություններ ստանալ Կիլիկիայում սկսված ջարդերի ու տարագրության մասին: Այդ լուրերը բերում էին բրիտանական նավերով փրկված կիլիկիացի փախստականները: Տեղեկությունների ճշմարտացիությունը ստուգելուց հետո Լևոն Մկրտիչյանը դրանց մասին հեռագրեց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին՝ խնդրելով դիմել տերությունների աջակցությանը [17]: Սակայն եգիպտահայ գործիչը վստահ էր, որ Անտանտի երկրներից որևէ օգնություն այդ պահին սպասել չէին կարող, քանի որ նրանք Դարդանելի օպերացիայի վրա էին կենտրոնացած: Մայիսի 22-ին Ապահին ուղարկած նամակում Լ. Մկրտիչյանը այն համոզմունքն էր հայտնում, որ «Տարտանէլը մինչեւ որ չիյնայ, Դաշնակիցք զօրք չէն հաներ Կիլիկիա, թէկուզ ամբողջ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը բնաջինջ ըլլայ» [18]:

Հունիսի 17-ի նամակով Պ. Նուբարը տեղեկացրեց Գևորգ Ե կաթողիկոսին, որ Անտանտի երկրները որևէ կերպ չէին կարող կանխել կոտորածները: Նշում էր, որ կաթողիկոսի դիմումների հիման վրա էր, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը մայիսի 24-ին հայտարարություն էին տարածել, որով թուրքական պետությանը և պաշտոնյաներին պատասխանատու էին համարում հայկական կոտորածների համար [19]: Սակայն դա չէր կարող կանխել կոտորածն ու տեղահանությունը: Ամերիկյան դիվանագետ Լ. Էյնշտեյնը, որն այդ ժամանակ Կ. Պոլսում էր, նույնպես վկայում է, որ Անտանտի երկրների հայտարարությունը մի փոքր բարկացրել և անհանգստացրել էր մեծ վեզիրին, սակայն մյուս թուրք պաշտոնյաները լիովին անտարբեր էին վերաբերվել դրան [20]:

Հունիսի 30-ին եգիպտահայ գործիչներ Ժան Մութաֆովը և Կամսարականը Ալեքսանդրիայից ուղարկած նամակով Պ. Նուբարին տեղեկացրին, որ Զեյթունը, Դյորթ Յոլը, Հասան-Բեյլին ավերված են, հայ բնակչությանը թուրքական իշխանությունները տեղահանել են դեպի Մոսուլ, Զոր ու Կոնիա, իսկ նրանց տեղում բնակեցրել են Մակեդոնիայից փախած գաղթական մահմեդականներին: Ադանան, Այնթապը, Սիսը, Հաճնը նոր կոտորածների սարսափի մեջ են: Այդ ամենի նպատակը հայ տարրի ամբողջական ոչնչացումն էին համարում: Անհրաժեշտ էր համարվում անհապաղ Անտանտի զորքերի ու հայ կամավորական խմբերի միջոցով ազատագրել Կիլիկիան [21]:

Նման զարգացումներից խիստ անհանգստացած Ազգային պատվիրակության նախագահը դիմեց Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարող շրջաններին, սակայն

այս անգամ ևս դրանք արդյունք չտվեցին: Հուլիսի 6-ին Լոնդոնում նա հանդիպեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարարի օգնական Արթուր Նիկոլսոնի հետ, ներկայացրեց Կիլիկիայում ստեղծված ծանր վիճակը և նշեց, որ «եթե Դաշնակիցները, հայ կամավորների հետ օգնության չհասնեն հայ բնակչությանը՝ զորքեր ափհանելով Ալեքսանդրետում, կոտորածները կընդունեն լայն ծավալներ» [22]: Սակայն բրիտանացի դիվանագետը պատասխանեց, որ Դարդանելի օպերացիան կլանել է դաշնակիցների բոլոր ուժերը և նրանք ի վիճակի չեն ռազմական գործողություններ ծավալելու Կիլիկիայում:

Արդեն հուլիսի 13-ին Ժ. Մութաֆովը ավելի մռայլ և հուսահատեցնող լուրերով նամակ ուղարկեց Պ. Նուբարին [23]: Նկարագրում էր Կիլիկիայում սկսված զանգվածային տեղահանություններն ու ջարդերը, խնդրում էր անհապաղ ու կտրուկ միջոցներ ձեռնարկել 250-300 հազար կիլիկիահայերին փրկելու համար: Նշվում էր, որ եթե անհապաղ ռազմական միջամտություն չկատարվի, ապա Կիլիկիայում այլևս հայեր չեն մնա: «Ինչպե՞ս կարող են դաշնակիցները,- գրում էր Ժ. Մութաֆովը,- իրենց բոլոր մարդասիրական սկզբունքներով, մնալ անտարբեր և թույլ տալ մարդկության դեմ ուղղված նման վիթխարի ոճիր իրականացվի մեր դահիճների կողմից հենց իրենց աչքերի առաջ: Նրանք, ովքեր պատասխանատու են, փաստորեն, իրենց թշնամիներն են և այս հրեշավոր չարչարանքին վերջ դնելու խնդիրը բավական աննշան ջանք կպահանջի՝ համեմատած նրանց վերջին հսկայական ջանքերին ներդրված թշնամի երկրի այլ տարածքներում:

Ճիշտն ասած, Դաշնակիցների այս անտարբեր վերաբերմունքը հենց այս պահին, երբ մեր ազգային գոյությունը Կիլիկիայում վտանգի տակ է, միշտ կմնա անհասկանալի, կարևոր չէ, թե ինչ ռազմական, քաղաքական կամ ստրատեգիական պատճառներ կարող էին լինել: Եվ այսպիսով, Ձերդ գերազանցություն, մենք չգիտենք էլ ինչպես խնդրենք ձեզնից Կիլիկիայի մեր եղբայրների անունից, որ Ձեր բոլոր ջանքերն ու եռանդն ուղղեք Դաշնակիցների անհապաղ զինված ներխուժման ուղղությամբ՝ ներխուժում, որն անհրաժեշտ է դադարեցնելու բնաջնջումը մի ամբողջ ժողովրդի, որի մեղքը քրիստոնյա լինելն է, քաղաքակրթություն գուրգուրելը և իրական համակրանք տածելը Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հանդեպ» [24]:

Հայ գործիչների համար կարևորագույն խնդիրը կոտորածների և տարագրության կանխումն էր: Եթե հնարավոր էր համարվում կարճ ժամանակում Արևմտյան Հայաստանի գրավումը ռուսական բանակի կողմից, ապա Կիլիկիան հեռու էր Կովկասյան ռազմաճակատից և տեղի հայությանը թուրքական կոտորածներից փրկելու համար հայ գործիչները ստիպված էին այլ ելք որոնելու: Լավագույն տարբերակը Կիլիկիայում բրիտանական կամ ֆրանսիական զորքեր ափհանելը և նրանց օգնությամբ երկրամասը թուրքերից ազատագրելն էր: Տեղի հայերն իրենց հերթին պատրաստակամ էին կռվելու Անտանտի բանակների կողքին: Կիլիկիայում հայկական ապստամբությունը և դաշնակիցների օգնությամբ ազատագրումը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաև՝ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերը ի վիճակի չէին լինի ամբողջ ահավորությամբ իրականացնելու Հայոց մեծ եղեռնը:

Ցավոք, աշխարհի հզորներին այնքան էլ չէր հուզում իրենց համակրող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը, և նրանց միակ մտահոգությունը սեփական շահախնդրական ձգտումների ապահովումն էր: Եվրոպայի «մարդասեր» ու «հայասեր» ղեկավարները, ինչպես հայտնի է, ոչ միայն օգնության ձեռք չէին մեկնելու ցեղասպանության ենթարկվող փոքր դաշնակից հայերին, այլև՝ հետագայում հաճույքով սեղմեցին թուրքերի արյու-

նոտ ձեռքը՝ նորից անպաշտպան թողնելով հույսը եվրոպական «քաղաքակիրթ» աշխարհի վրա դրած հայ ժողովրդին:

Այսպիսով՝ Կիլիկիայից եկող լուրերն օրեցօր ավելի սև գույներ էին ընդունում, իսկ Անտանտի երկրները որևէ մտադրություն ցույց չէին տալիս օգնելու հայերին: Նման պայմաններում հրատապ էր դառնում հայկական կամավորական զորամասի ստեղծման և դրա ուժերով Կիլիկիան ազատագրելու գաղափարը:

Հուլիսի 18-ին Պ. Նուբարը կաթողիկոսին հեռագրեց, որ ինքը տեղեկացել է, որ թուրքերի գլխավոր նպատակն է Հայաստանի և Կիլիկիայի հայերին տեղահանել դեպի Կոնիա, Միջագետք և ոչնչացնել: Խորհուրդ էր տալիս, որ կաթողիկոսը նորից դիմի Անտանտի և չեզոք երկրներին՝ կանխելու այդ ծրագիրը [25]: Փաստորեն հայ գործիչների համար արդեն պարզ էր թուրքերի գլխավոր նպատակը, սակայն դա կանխելու հնարավորություն նրանք չունեին, և միակ թույլ հույսը մնում էր չեզոք երկրների միջամտությունը:

Կ. Պոլսում գերմանական դեսպան Մետերնիխը կանցլեր Բետման-Հոլվեգին ուղարկած զեկուցագրում նշում էր. «Հայկական հարցը հայկական ցեղի ոչնչացմամբ վերացնելու իրենց ծրագրի իրականացման գործում թուրքական կառավարությունը չարձագանքեց ոչ մեր, ոչ ամերիկյան դեսպանատան և Վատիկանի ներկայացուցչի դիմումներին, ոչ էլ Անտանտի տերությունների սպառնալիքին, և ամենաքիչը հաշվի առավ Արևմտյան Եվրոպայի կարծիքը, այժմ այն պատրաստվում է մասնատել և ցրել առաջին տեղահանությունից հետո կենդանի մնացած հայերի վերջին խմբերը» [26]:

Ամռանը հայ և բրիտանացի տարբեր գործիչների կողմից առաջ քաշվեցին Կիլիկիայում դաշնակիցների կամ հայ կամավորների ուժերով ափհանում կատարելու մի շարք նախագծեր, որի շնորհիվ կիլիկիահայությունը կփրկվեր: Սակայն կիլիկիահայության տեղահանությունից հետո դրանք անիրագործելի դարձան: Չնայած բրիտանական կողմը հիմնականում հավանություն էր տվել վերոնշյալ ծրագրերին, սակայն դա հանդիպել էր Ֆրանսիայի ընդդիմությանը: Վերջինս այլ ծրագրեր ուներ տարածաշրջանում, և հենց նրա ցույց տված դիմադրությունն էր պատճառը, որ Կիլիկիայում ափհանում չկատարվեց, և երկրամասը չազատագրվեց թուրքերից, չնայած թե՛ բրիտանացիները, թե՛ ռուսները դա համարում էին հնարավոր և անհրաժեշտ քայլ:

Այսպիսով՝ 1915 թ. Կիլիկիայի գրեթե ողջ հայ բնակչությունը տարագրվեց: Չնայած բազմաթիվ հայեր կախաղան բարձրացվեցին կամ սպանվեցին բանտերում, սակայն զանգվածային կոտորածներ Կիլիկիայում հիմնականում տեղի չունեցան, ինչպես մյուս հայկական երկրամասերում: Կիլիկիահայերը զանգվածային ոչնչացման ենթարկվեցին հիմնականում Դեր Զորում և մյուս համակենտրոնացման ճամբարներում: Կիլիկիայի հայության տեղահանությունը կարող էր կանխվել Անտանտի երկրների կողմից ափհանում կատարելու դեպքում, սակայն դա տեղի չունեցավ: Մոտ 400.000 հաշվվող կիլիկիահայերից միայն 150.000-ը կենդանի մնաց և պատերազմից հետո վերադարձավ հայրենիք: Ցավոք, երեք տարի անց նրանք պարտադրված էին Կիլիկիան վերջնականապես լքելու Ֆրանսիայի անհեռատես քաղաքականության պատճառով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, էջ 101:
2. Նորաշխարյան Լ., Զեյթունը 1914-1921 թթ. (Հուշեր), Եր., 1984, էջ 18:
3. Կիլիկեան կսկիծներ: Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն, 1903-1915, Պէյրութ, 1927, էջ 110-115, 144-156, 163-165:
4. ՀԱԱ, ֆ. 453, g. 1, գ. 158, թ. 2-3:
5. Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, 2000, էջ 39:
6. Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Առաջաբանը Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վ. Պողոսյանը, հ. Ա, Եր., 2005, էջ 72:
7. Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 41:
8. Կիլիկեան կսկիծներ, էջ 161-193:
9. Տաշեան Հ., Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921, էջ 53-54:
10. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Եր., 2005, էջ 112-113:
11. Կէօքճեան Վ., Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (Յուշեր եւ նօթեր), Պոսթըն, 1979, էջ 87:
12. ՀԱԱ, ֆ. 450, g. 3, գ. 71, թ. 27-28:
13. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна. Второе, дополненное издание, Ер., 1983, стр. 355.
14. Կիլիկեան կսկիծներ, էջ 206:
15. Նույն տեղում, էջ 178:
16. Նույն տեղում, էջ 176:
17. ՀԱԱ, ֆ. 453, g. 1, գ. 70, թ. 87-88:
18. Նույն տեղում, թ. 88:
19. Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, pp. 108-110.
20. Einstein L., Inside Constantinople. A Diplomatist's diary during the Dardanelles Expedition, April-September, 1915. New York, 1918, p. 126.
21. ՀԱԱ, Ֆ. 453, g. 1, գ. 197, թ. 1:
22. Boghos Nubar's Papers…, p. 142.
23. Նույն տեղում, էջ 161-162:
24. Նույն տեղում, էջ 162:
25. Նույն տեղում, էջ 180:
26. Геноцид армян в Османской империи, стр. 418.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կիլիկիահայության տեղահանությունը Հայոց ցեղասպանության ժամանակ

Սամվել Պողոսյան

Հայոց ցեղասպանության ժամանակ Կիլիկիայի գրեթե ողջ հայ բնակչությունը տարագրվեց: Թուրքերը կարողացան Զեյթունում կանխել հնարավոր ինքնապաշտպանությունը: Կիլիկիայում զանգվածային կոտորածներ հիմնականում տեղի չունեցան, ինչպես մյուս հայկական երկրամասերում: Կիլիկիահայերը զանգվածային ոչնչացման ենթարվեցին հիմնականում համակենտրոնացման ճամբարներում: Կիլիկիայի հայության տեղահանությունը կարող էր կանխվել Անտանտի երկրների կողմից ափհանում կատարելու դեպքում, սակայն դա տեղի չունեցավ: Մոտ 400.000 հաշվվող կիլիկիահայերից միայն 150.000-ը կենդանի մնաց և պատերազմից հետո վերադարձավ հայրենիք:

Բանալի բառեր՝ *Կիլիկիա, Մեծ եղեռն, տեղահանություն, կոտորած, Զեյթուն, Դարդանելի օպերացիա:*

РЕЗЮМЕ

Депортация киликийских армян во время Геноцида армян

Самвел Погосян

Во время Геноцида армян было депортировано почти все армянское население Киликии. Турки смогли предотвратить возможное сопротивление Зейтуна. Резни в Киликии в основном не было, как в других провинциях. Массовое истребление киликийских армян произошло, главным образом, в концентрационных лагерях. Депортацию киликийских армян можно было бы предотвратить, если бы страны Антанты высадили десант, но этого не произошло. Только 150000 из 400000 киликийских армян выжили и вернулись домой после войны.

Ключевые слова: *Киликия, Геноцид армян, депортация, резня, Зейтун, операция Дарданеллы.*

SUMMARY

The Deportation of Cilician Armenians during Armenian Genocide

Samvel Poghosyan

During the Armenian Genocide almost the entire Armenian population of Cilicia was deported. Turks were able to prevent a possible resistance of Zeitun. Massacres in Cilicia mostly did not take place as in other provinces. The Cilician Armenians were exterminated mainly in concentration camps. The deportation of Cilician Armenians could have been prevented if the Entente countries had landed troops there, but that did not happen. Only 150,000 of the 400,000 Cilician Armenians survived and returned home after the war.

Key words: *Cilicia, Armenian Genocide, deportation, massacre, Zeitun, Dardanelles operation*